ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3
www.minurban.am, E-mail: info@minurban.am

03.04.2026թ. N 02/16.4/5625-2026

«Էմեկս» սահմանափակ պատասխանատվությամբ
ընկերության տնօրեն
պարոն Արմեն ԳՅՈՒՐՋԻՆՅԱՆԻՆ
էլ.փոստի հասցե՝ favoritpartners@gmail.com

ԾԱՆՈՒՑՈՒՄ
Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հարգելի պարոն Գյուրջինյան

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Էմեկս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) միջև 2026 թվականի մարտի 3-ին կնքվել է «Ավտոմեքենաների վերանորոգման ծառայության» մատուցման N ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-26/4 գնման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

Հիմք ընդունելով Ձեր 2026 թվականի մարտի 30-ի N 5/8067-2026 գրության հիման վրա պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված 2026 թվականի ապրիլի 2-ի N Ն/16.1/3515-2026 զեկուցագիրը և Պայմանագրի 2.1.3 կետը՝ Պատվիրատուն 2026 թվականի ապրիլի 3-ից Պայմանագիրը միակողմանի լուծում է:

Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի՝ Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը 2026 թվականի ապրիլի 3-ին կտեղադրվի տեղեկագրում, որին հաջորդող տասներորդ օրացուցային օրը կկայացվի Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշումն Ընկերությանը գնումների գործընթացին իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու մասին: Որոշումը կայացվելուն հաջորդող օրն այն գրավոր կտրամադրվի լիազորված մարմնին և Ընկերությանը:

Եթե մինչև Պատվիրատուի ղեկավարի որոշման կայացման վերջնաժամկետը լրանալու օրը ՀՀ ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի «900005000758» և «900008000664» հաշվեհամարներին Ընկերության կողմից վճարվեն

պայմանագրի և որակավորման ապահովման գումարները՝ համապատասխանաբար 222 500 (երկու հարյուր քսաներկու հազար հինգ հարյուր) և 333 750 (երեք հարյուր երեսուներեք հազար յոթ հարյուր հիսուն) ՀՀ դրամի չափով, և վճարումը կատարված լինելու վերբերյալ հիմնավորող փսաստաթղթերը ներկայացվեն Պատվիրատուին, ապա Պատվիրատուն Ընկերությանը Ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնի լիազորված մարմին:

Հարգանքով՝

Ստորագրող
ՎԱՐԴԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
4103890509

2026-04-03 16:49:57 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

Վարդան ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ ՔԿ ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական
հաշվառման վարչության պետ Հասմիկ Բաղինյան, Հեռ: 011621822
Կատարող՝ գնումների կազմակերպման
բաժնի պետ՝ Արայիկ Մնացականյան, Հեռ: 011621722